



Հաստատում եմ՝
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
տնօրեն Վ. Ա. Տեր-Ղևոնդյան

Կարծիք

Զարուհի Հրայրի Խաչատրյանի «Ձիանունները պարսկերենում և
հայերենում. համեմատական ուսումնասիրություն» Ժ.02.02 «Ընդհանուր և
համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության
մասին:

Կարծիքը հաստատվել է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
Արևելագիտության բաժնի 2020 թ. հունվարի 21-ի նիստում (արձանագրություն թիվ
1):

Նիստին մասնակցում էին. – պ.գ.դ. Վ. Տեր-Ղևոնդյանը (բաժնի վարիչ), պ.գ.դ.
Ք. Կոստիկյանը, բ.գ.թ. Հ. Կիրակոսյանը, պ.գ.թ. Վ. Մակարյանը, պ.գ.թ. Գ.
Երանյանը, բ.գ.թ. Հ. Գևորգյանը, Ք. Սահակյանը (կրտսեր գիտաշխատող), Ա.
Ավետիսյանը (կրտսեր գիտաշխատող), Է. Ղազարյանը (կրտսեր գիտաշխատող) Է.
Պետրոսյանը (կրտսեր գիտաշխատող), Ա. Թովմասյանը (լաբորանտ):

Արտահայտվեցին. – պ.գ.դ. Վ. Տեր-Ղևոնդյանը, բ.գ.թ. Հ. Կիրակոսյանը,
պ.գ.դ. Ք. Կոստիկյանը, բ.գ.թ. Հ. Գևորգյանը:

Նշեցին, որ Զարուհի Հրայրի Խաչատրյանի թեկնածուական
ատենախոսությունը նվիրված է պարսից լեզվի բառապաշարում ձիանունների
թեմատիկ խմբի ուսումնասիրությանը: Ընտանի կենդանիների, մասնավորապես,
ծիու անվանումները պարսկերենի բառապաշարի կայուն շերտերից են և հիմնական
բառաֆոնդի մաս են կազմում:

Ուսումնասիրության համար ընտրվել է պարսկերենում վկայված ձիանունների
ամբողջ լեզվանյութը՝ ժամանակագրական առումով ընդգրկելով պարսից լեզվի

պատմական զարգացման բոլոր փուլերը՝ հին իրանական լեզվադարաշրջանից մինչև նոր ու ժամանակակից իրանական լեզուներ և բարբառներ: Քննության է ենթարկվել հայերենի և բարբառների իրանական կամ պարսկերենի միջոցով փոխառնված ձևանունները:

Ատենախոսն իր առջև դրել է հետևյալ խնդիրները. ա) ներկայացնել պարսկերենի բառապաշարում ընտանի կենդանիների անվանումների շարքում ձևանունների հնարավորինս ամբողջական պատկերը, բ) դասակարգել բերված լեզվական նյութը՝ ըստ ենթաիմաստային խմբերի և ծագման, գ) ներկայացնել պարսկերենում վկայված ձևանունները (ինչպես նաև պարսկերենում չվկայված, սակայն ստուգաբանորեն իրանական արմատին հանգող ձևանունները) գրաբարում, միջին և ժամանակակից հայերենում ու բարբառներում, դ) անդրադառնալ պարսից դասական պոեզիայում (մասնավորապես էպիկական ժանրի ստեղծագործություններում), ինչպես նաև ասացվածքներում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում վկայված ձևանուններին, ե) համեմատական նյութի ներգրավմամբ՝ քննության ենթարկել ժամանակակից պարսկերենի և իրանական այլ լեզուների (գիլաներենի, բախթյարիի, նեհավենդիի, տաջիկերենի) և հայերենի խնդրո առարկա դարձվածաբանական միավորների իմաստային ընդհանրություններն ու տարբերությունները:

Ատենախոսի մանրակրկիտ և համակողմանի ուսումնասիրությամբ ձեռք բերված հարուստ նյութի հիման վրա առաջին անգամ կատարվել է թեմատիկ ողջ բառաշերտի բավականին մանրամասն ենթաիմաստային դասակարգում և առանձնացվել է տասնչորս հիմնական խումբ: Այստեղ հեղինակն աշխատանքի հետազոտության լեզվական հիմնական նյութը դուրս է բերել պարսկերեն, իրանական և թյուրքական մի շարք լեզուների, արաբերեն և հայերեն բառարանագրական աղբյուրներից՝ սկսած 10-րդ դարից մինչև մեր օրերը (թվով 120 բառարան և 3. Կարստի «Միջին հայերենի գիտական բառարանի» ձեռագիրը Մատենադարանի արխիվից), գրական գրավոր հուշարձաններից,

ծիանատյաններից և ձիու բժշկարաններից:

Խնդրո առարկա բառապաշարը քննելիս ատենախոսն ամբողջ լեզվական նյութը դասակարգել է ըստ ծագման՝ իրանական, արաբական և թյուրքական: Կատարել է հանգամանալից բառաքննական աշխատանք, անհրաժեշտության դեպքում տվել քննվող ձիանունների հոմանիշները, ինչպես նաև բառի իմաստային մյուս դրսևորումները պարսկերենում և իրանական այլ լեզուներում, նշել արաբական ծագման յուրաքանչյուր ձիանվան բառարմատը, դրա հնչյունական և իմաստային փոփոխությունները պարսկերենում: Փորձ է կատարվել մի շարք ձիանուններ առաջին անգամ ենթարկել ստուգաբանական քննության:

Պարսկերեն և հայերեն ձիանատյանների ու ձիու բժշկարանների տրամադրած հարուստ բառամթերքի ուսումնասիրության գործում հեղինակին օգնել է պարսկերենի լավ իմացությունը:

Ատենախոսը համեմատական քննության է ենթարկել գրաբարում և միջին հայերենում, ինչպես նաև ժամանակակից հայերենում և բարբառներում վկայված պարսկերեն ձիանունները, որոնք մինչ օրս համապարփակ ուսումնասիրության չէին ենթարկվել: Աշխատանքը կարևոր է հատկապես հայերենի փոխառյալ այդ շերտի ծագումնաբանական դասակարգման առումով:

Պարսկերենի և հայերենի զարգացման պատմության ուսումնասիրության մեջ մշտապես արդիական է երկու լեզուների փոխազդեցությունների խնդիրը: Այս աշխատանքում կատարված առանձին իմաստային խմբերի զուգադրական քննությունն այդ փոխազդեցությունների բացահայտման ուղիներից մեկն է:

Ատենախոսության հեղինակն ընտրել է պարսից երեք հայտնի դասականների՝ Աբուլ Ղասեմ Ֆիրդուսիի, Խաղանի Շիրվանիի և Նիզամի Գյանջավիի ստեղծագործություններում հանդիպող համարյա բոլոր ձիանունների գրական վկայությունները, որոնց հայերեն թարգմանությունները կատարված են ճշգրտորեն: Ելնելով ձիանունների այսչափ առատությունից, հարկ է նշել, որ ճիշտ են ընտրված

նաև էպիկական ժանրի ստեղծագործությունները, քանի որ դրանցում առավել հաճախադեպ է ձիանունների գործածությունը:

Գնահատելի է նաև պարսկերեն ասացվածքներում, դարձվածքներում և կայուն բառակապակցություններում հիշված ձիանունների ուսումնասիրությունն՝ իրանական այլ լեզուների և հայերենի համեմատությամբ: Ժամանակակից պարսկերենի, բախթյարիի, նեհավանդիի, գիլաներենի, տաջիկերենի և հայերենի (համեմատվող դարձվածքները ընտրվել են իմաստային և կառուցվածքային առումով առավել մոտ լինելու սկզբունքով) ընձեռած նյութի հիման վրա քննության են առնվել այն ասացվածքները, դարձվածքները և կայուն բառակապակցությունները, որոնք ձևավորվել են պարսկերենում վկայված ձի բառայթի առանցքային կիրառությամբ: Այսպիսի ասացվածքների և դարձվածքների շարքում բավական շատ են նաև հոմանիշային զույգերը, որոնց անդրադարձ է կատարվել՝ ներկայացնելով դրանց իմաստային և գործառական համապատասխան բացատրությունները:

Թեկնածուական ատենախոսության վերը նշված արժանիքները հիմք են տալիս հավաստելու, որ Զարուհի Խաչատրյանը լիովին տիրապետում է նյութին, ծանոթ է համապատասխան գրականությանը, որի շնորհիվ էլ ներկայացված ատենախոսությունը ստանում է գիտական պատշաճ տեսք:

Աշխատանքն առավել կատարյալ տեսնելու միտումով ներկայացնենք հետևյալ դիտողությունները.

1) Ատենախոսության մեջ հանդիպում են ոչ ճիշտ ձևակերպումներ, ոչ հետևողական անդրադարձներ, մասնավորապես, էջ 8՝ «Մատենադարանի պետական արխիվ», փոխարենը՝ «Մատենադարանի արխիվ», էջ 4-ում նշվում է ուղտերի անունների մասին, սակայն ատենախոսության մեջ այդ անուններին անդրադարձ, կամ դրանց քննություն չի կատարվում և նշումը մնում է անպատասխան: Կան հետևյալ անճշտությունները՝ Նիզամի Գյանջավին նշվել է 11-րդ դարի հեղինակ, մինչդեռ բանաստեղծը ծնվել է 1141 թ. և մահացել է 1209 թ., նույն կերպ, Խաղանի Շիրվանին՝ ծնվել է 1126 թ.-ին, մահացել 1198 թ. (տվյալներն ըստ

Iranica հանրագիտարանի), սակայն ատենախոսը նրան համարել է 11-րդ դարի բանաստեղծ: Ատենախոսության 3-րդ գլխի 1-ին ենթագլխում՝ «Ձիանունները պարսից դասական գրականության մեջ», հեղինակը ձիանունները քննելիս չի բերում դրանց հայերեն համարժեքները:

2) *Tātāri* «1. սրընթաց ձի, 2. թաթարական ցեղատեսակի ձի, որն աչքի է ընկնում իր դիմացկունությամբ ու արագավազությամբ» (էջ 41) ձիանունը արդարարացված չէ դիտարկել իրանական ծագման ձիանունների ենթագլխում: Նույն ձևով *torkī* «թուրքական ձի» անվանումը: Արդյո՞ք պետք է ենթադրել, որ *թաթար* և *թուրք* ցեղանուններն ունեն իրանական ծագում, հատկապես, որ այդ մասին որևէ բացատրություն չկա: Եվ, կարծում ենք, որ այս բաժնում պետք չէր ներգրավել այնպիսի ձիանունները, որոնց իրանական ծագման մասին հիմնավորում չի բերվում, օրինակ՝ էջ 42՝ «*Toroy* կարմրաթույր ձի (BQ, 475; LD, IV, 5808): Այն նույն իմաստով հանդիպում է նաև *tory* տարբերակով: Հարկ է նշել, որ հայերենում՝ Նոր Նախիջևանի բարբառում, նույնպես հանդիպում է նույն գունային երանգ ունեցող ձին՝ *տոռու* «աշխեստձի» եզրը (<LFA, VI, 222), իսկ գունանունը՝ *տոռ* «կարմիր», հանդիպում է Կարինի և Շիրակի բարբառներում», ինչպես տեսնում ենք իրանական ծագման մասին հիմնավորում չկա: Կամ էջ 41՝ «*Tātu* կարճահասակ ու մանր ցեղատեսակի ձի՝ երկար մազերով ու բաշով (LD, IV, 5345, FM, I, 994): Ձին արտաքնապես նման է շոտլանդական հայտնի պոնի ցեղատեսակի ձիուն», կամ էջ 55՝ «*Hayun* 1. ձի (LF, 374 (1930); SF, 256; BQ, IV, 7410), 2. ցանկացած մեծ չորքոտանի կենդանի... (LD, XIV, 20881; <U, II, 1186): Բառն արտաքուստ հուն. *εύγενης* «ազնիվ, իսկական» (կենդանիների համար) եզրից է՝ կազմվա *δέύς* «բարի» և *γένος* «ազգ, ցեղ» բաղադրիչներից», կրկին հիմնավորում իրանական ծագման մասին կամ իրանական վկայվածության պատմություն չկա, մինչդեռ ընդգրկված են «Իրանական ծագման ձիանուններ» ենթագլխում: Կարծում ենք՝ նշված ձիանունների իրանական ծագումը հիմնավորված չէ, ուստի հարկ էր դրանք քննել առանձին ենթաբաժնում:

3) Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի թերություններ:

Վերոնշյալ դիտողություններն ամենևին չեն ստվերում ատենախոսության բարձր գիտական արժեքը:

Հեղինակի՝ թեմային առնչվող տպագիր հոդվածները վեցն են և համապատասխանում են թեմայի բովանդակությանը (ատենախոսության բովանդակության յուրաքանչյուր գլխին համապատասխանում է երկուական հոդված):

Ատենախոսության բովանդակությունը և սեղմագրում ներկայացված դրույթները միմյանց համապատասխանում են:

Այսպիսով, Ջարուիի Խաչատրյանի «Ձիանունները պարսկերենում և հայերենում. համեմատական ուսումնասիրություն» թեմայով աշխատանքը համապատասխանում է ԲՈԿ-ի կողմից Ժ.02.02 թվանիշով «Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանն առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է բանասիրական գիտությունների թեկնածուի՝ իր հայցած աստիճանին:

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«Արևելագիտության» բաժնի վարիչ՝ պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյան

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
«Արևելագիտության» բաժնի վարիչ՝ պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյանի
ստորագրությունը հաստատում եմ

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Վ. Հ. Թորոսյան

